

Հ. Վ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՍՏ ՎԱՆՔԻ 1739—1759 ԹԹ. «ԵԼԻՑ-ՄՏԻՑ» ՄԱՏՅԱՆՆԵՐԻ

Հայոց Եկեղեցու, նրա աթոռանիստ կենտրոնի ու հատկապես հայ ժողովրդի արևելահայ հատվածի սոցիալ-տնտեսական վիճակի պատմության ուսումնասիրության համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վանական տնտեսության 1739—1759 թթ. «Ելից-մտից» մատյանները, որոնք մասնագետների կողմից դեռևս պատշաճ ուշադրության չեն արժանացել[1]: Մատյանները հատկապես կարևոր են Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրման համար, իսկ տնտեսությունն ուսումնասիրելը, նրա զարգացման կոնկրետ օրինաչափությունները բացահայտելը այդ հասարակության սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման հիմնական հարցն է: Մատյանների ուսումնասիրումից միաժամանակ պարզվում է, որ Արևելյան Հայաստանը գտնվելով իրանական տիրապետության տակ, չի զրկվել տնտեսական իր ինքնուրույնությունից, չի վերածվել տիրապետողների վարչական ու տնտեսական սիստեմի դիմազուրկ կցորդի:

17—18-րդ դդ. Արևելյան Հայաստանի տնտեսությանը տեսք տվողը հանդիսացել է ոչ այնքան աշխարհիկ, որքան եկեղեցական-վանական տնտեսությունը: Դա պայմանավորված էր հիմնականում այն հանգամանքով, որ եկեղեցական կալվածքները իրենց հիմքում ունենալով վակֆային (հայկական աղբյուրներում վախմ) իրավունքի նախապայման, կոտորակման ենթակա չէին: Այդ իրավունքի մասին արժեքավոր տեղեկություններ է

[1] Միակ հեղինակը Բ. Հարությունյանն է, որն իր ուսումնասիրություններում մասնակիորեն օգտագործել է այդ աղբյուրները: (**Арутюнян Б.**, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., Ереван, 1940. Նույնի, Վարձու աշխատանքը Երևանի խանության մեջ 17-րդ դ. և 19-րդ դ. առաջին քառորդում, «Պատմա—բանասիրական հանդես» 1, Երևան, 1959;

հաղորդում Սիմեոն Երևանցին: Այսպես, նկարագրելով կաթողիկոս Գրիգոր Մակվեցու կողմից 1431 թ. Էջմիածնի վանքին Վաղարշապատ գյուղի նվիրատվության օրինակը, նա գրում է. «Եւ Գրիգոր կաթողիկոս գրեցուցանէ ի յերիս ղապալայոջսն եւ թէ Գրիգոր խալիֆայն առնու զգեղոյս զայս և վախըֆ տա Էջմիածնի Աթոռոյն: Քանզի որովհետև յամենայն յազգս օրէն է, զի վախըֆն ոչ վաճառէ և ոչ յետս դառնայ, վասն այսորիկ այսպէս գրեցուցանէ, զի մի ոք իշխեսցէ յետոյ վաճառել և գնել»[2]: Աշխարհիկ ավատական տների ներկայացուցիչներից շատերը միաժամանակ քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով, իրենց հողային տիրույթները հափշտակումից փրկելու նպատակով, դրանք նվիրում էին սեփական տիրույթի սահմաններում գտնվող վանքերին ու եկեղեցիներին նկատի ունենալով նաև այն, որ Հայ Եկեղեցու իրավունքների ամրապնդումը կնպաստի հետագայում իրենց իշխանության վերականգնմանը: Ըստ այդմ էլ, վանքերն ու եկեղեցիները, ինչպես նաև բարձր հոգևորականության առանձին ներկայացուցիչներ դառնում են տնտեսության կազմակերպիչներ: Այդ մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Առաքել Դավրիժեցին. «Ամենայն վանորայք ազգիս հայոց,—գրում է նա,—իւրաքանչիւր սեպհական ունէր իւր զինչս առանձին, այգի և բուրաստան, փեթակ և տուն, և մարան, և համբարանոցս, և զմուտս ստացուածոց նաև զմուտս հասարակաց վանիցն մասունս արարեալ՝ յինքեանս բաժանէին»[3]: Վանական տնտեսությունները ընդարձակվում էին նաև սեփական միջոցների ու կուտակումների հաշվին: Եկեղեցական տնտեսություններն այս շրջանում ընդգրկում էին գյուղատնտեսության գրեթե բոլոր կարևոր ճյուղերը և գյուղատնտեսական հումքի վերամշակման բազմազան ձեռնարկություններ:

Իբրև Հայ Եկեղեցու աթոռանիստ կենտրոն, իր հողային տարածքներով ու անշարժ գույքով առանձնանում էր Էջմիածնի վանքը: Ինչպես վկայում են աղբյուրները, արդեն 18-րդ դարի կեսերին վանքի սեփականատիրական իրավունքները (մուլք) տարածվել են 23 գյուղերի վրա, որոնցից Վաղարշապատի, Նորագեղի, Բոխենիսի, Քիրաջլուի՝ 6, Եղվարդի՝ 4—5, Մաստարայի՝ 2—5, Օշականի՝ 0—5 դանգ, սեփականությունն օտարման ենթարկվելու դեպքում բաժանվում էր 6 հավասար մասերի, որը իրանական աղբյուրներում կոչվում էր դանգ, իսկ հայկականում ստակ: Մեկ ամբողջական կալվածքը 6 դանգ (ստակ) էր, մուլքերին որպես վակֆ, իսկ մնացած գյուղերին՝ գանձագին մուլքի իրավունքով[4]: Եթե նկատի ունենանք, որ 18-րդ դարի վերջերին, ըստ Ի. Շոպենի Երևանի խանությունում կային 87 մուլքադարական գյուղեր, ապա ստացվում է, որ Էջմիածնի վանքը իր ձեռքում է կենտրոնացրել մուլքադարական գյուղերի մոտ 26 տոկոսը, իսկ նրանցում եղած գյուղացիական տնտեսությունները կազմել են խանության մեջ եղած գյուղացիական բոլոր տնտեսությունների ավելի քան 11 տոկոսը[5]: Ըստ Բ. Հարությունյանի հաշվարկների, Էջմիածնի վանական տնտեսության վարելահողերի ու այգիների ընդհանուր տարածությունը կազմել է մոտ 1142 հեկտար[6]:

---

[2] **Սիմեոն Երևանցի,** Զամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 101:

[3] **Առաքել Դավրիժեցի,** Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 288—289, հմմտ.. **Գրիգոր Դարանաղցի,** Ժամանակագրութիւն, Երուսաղեմ 1915, էջ 296:

[4] **Սիմեոն Երևանցի,** Զամբռ, էջ 100—129:

[5] *Шопен И.* Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, с. 931—940.

[6] *Арутюнян Б.*, Крупное монастырское хозяйство..., с. 39—40.

Վանական տնտեսության վարելահողերի մի մասը հատկացված էր հացահատիկային կուլտուրաների մշակությանը: Մշակվել են ցորենի և գարու աշնանացան ու գարնանացան տեսակները: Այսպես, վանքի 1752 թ. հաշվեմատյանում նշվում է, որ վանքի հողատարածություններում սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ցորեն և գարի ցանվել է 630 սմար (տարածության չափ=մոտ 0,25 հա.) տարածքում, իսկ մարտ-ապրիլ ամիսներին՝ 345 սմար[7]: Ըստ 1728 թ. Վաղարշապատ գյուղի թուրքական հարկացուցակի, գյուղի չորս թաղերի բնակիչները պարտավոր էին որպես բահրա պետությանը վճարել. ցորեն՝ 2000 քիլա (ծանրության չափ=27—30 կգ.). գարի՝ 1800 քիլա[8]: Համաձայն Ի. Շոպենի տվյալների, իրանական տիրապետության վերջերին, Էջմիածնի վանքի հողատարածությունների համախառն բերքը հիշյալ կուլտուրաների գծով կազմել է. ցորեն՝ 6000 փութ (ծանրության չափ=16 կգ.), գարի՝ 1800 փութ[9]: Որպես գարնանացան ու աշնանացան հացահատիկային կուլտուրաներից մշակվել է և հաճարի կարմիր ու ապիտակ տեսակները. «Աճար իտակող ԻԲ (22) պառավաց վարձն ետու...»,—կարդում ենք վանքի հաշվեմատյաններից մեկում[10]: Բրնձի տարածվածության մասին է վկայում այն հանգամանքը, որ հաճախ վանական տնտեսությունում բրինձ է վաճառվել. «Թուին ՌՄԷ (1758) բրինձ ծախեցաք ՃԿԳ (163) լիտր Ա (1) լիտրն ԻԸ (28) փողով գինն եղև Ա թուման ԲՌ (2000) դիան»—տեղեկացնում է վանքի մեկ այլ հաշվեմատյան[11]:

Արևելյան Հայաստանում հողաապակավության ու ջրի պակասության պայմաններում հնարավոր չէր կիրառել դաշտավարության եռադաշտյան սիստեմը: Հիմնական սիստեմը ուերմնափոխությունն էր, երբ միևնույն հողակտորի վրա ցանքս է կատարվել երկու անգամ, ընդ որում հացաբույսերի ցանքսերին փոխարինել են բանջարա-բոստանային կամ կերային կուլտուրաները: Այդ մասին ուղղակի վկայություն ունի 17-րդ դ. ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդենը: Նա գրում է. «...այստեղ հողը երբեք հանգիստ չի մնում, երբ հավաքվում է մի բերք, իսկույն նրա փոխարեն ցանվում է մի այլ կուլտուրա»[12]:

Դաշտավարության մեջ լայն կիրառություն է գտել պարարտացումը: Էջմիածնի վանական տնտեսությունում օրինակ, կիրառվել է բնական պարարտանյութ տեղափոխողի վարձու աշխատանքը. «Կու կրող ԻԳ (23) մշակաց վարձն ետու ԱՌԳ (1003) շահի գիտութեամբ ժամօրհնողին»,—կարդում ենք վանքի մատյաններից մեկում[13]: Հողի բերքատվության բարձրացման կարևոր պայմաններից մեկն էլ մոլախոտերից մաքրումն էր. «Զայիր (մոլախոտ—Հ. Թ.) հավաքող ԻԵ (25) մշակաց վարձն ետու Ե (5)ին կէս շահով և Ի (20)ին ԱԱ (11) փողով տվաք չորս հարիւր ԾԵ (55) դիան ձեռամբ Ղունկիանոս վարդապետին»—տեղեկացնում է վանքի 1755 թ. հաշվեմատյանը[14]: Իսկ 1758 թ. մատյանից տեղեկանում ենք քարերից հո-

---

[7] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1, վավ. 13, էջ 76:

[8] Տես **Հ. Փափազյան,** Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, «Բանբեր Մատենադարանի» 5, Երևան, 1960, էջ 440:

[9] *Шопен И.,* Исторический памятник..., с. 680.

[10] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1, վավ. 13, էջ 32:

[11] Նույն տեղում, վավ. 23, էջ 3:

[12] *J. Chardin.* Voyages du Chavalier Chardin en Perse et autres lieux de l'Orient, vol. IV, Paris, 1811, p. 105.

[13] Մատենադարան, Կթղկ. դիվ, թղթ. 1, վավ. 13, էջ 245:

[14] Նույն տեղում, վավ. 27, էջ 51:

ղատարածությունների մաքրման, ինչպես նաև կոշտ հողակտորների փշրման մասին. «Հող քանտող և մանող ԼԲ (32) մշակաց վարձն ետու Գ (3) պիստով (դրամի միավոր՝ 20 դինար) վերակացու Ակոբ վարդապետի ձեռամբ ԱՌԴ (1004) ապասի Բ (2) շահի»[15]:

Հողամշակության համար կարևոր նշանակություն ուներ նաև գյուղատնտեսական գործիքների կատարելագործումը, սակայն բնատնտեսության պայմաններում այն չափազանց դանդաղ էր ընթանում: Դաշտավարության մեջ կիրառվող ամենակարևոր գործիքները արորն ու գութանն էին: Արորը վարում էր մակերեսային, ուստի և այն հիմնականում օգտագործում էին գարնանային ցանքի ժամանակ: Նրա արտադրողականությունը օրական չէր անցնում 0,3 հեկտարից: Արորավարի ժամանակ զբաղված էին լինում 1—6 մարդ, իսկ որպես քաշող ուժ պահանջվում էր 1—2 զույգ եզ: «Զույգ եզը» աղբյուրներում կոչվել է «Լուծ». «Խ (40) լուծ սամի (երկաթից պատրաստված ձողեր, որոնց արանքում մտնում էին եզների գլուխները) առինք Է (7) անասուն վարուց ձեռամբ վաքիլին, գինն ետու Թ (9) շահի»,— կարդում ենք վանքի հաշվեմատյաններից մեկում[16]: «Լուծը» հաճախ կոչվել է նաև «Զութ». «Զութ վարօղ մշակաց բաշխիչ ետու երկու հարիւր դրան»,— կարդում ենք վանքի մեկ այլ հաշվեմատյանում[17]:

Դաշտավարության մեջ հերկից անմիջապես հետո սկսվում էր ցանքը, որի ժամանակ այն արտերում, որտեղ արորը հնարավորություն չէր ունեցել ավելի խորը վարելու՝ հատկապես խամ հողերում, միաժամանակ կատարել են հողերի փխրեցման աշխատանքներ: Այն կատարվում էր փոցխով, որին քաշելու համար լծել են 2—3 զույգ եզներ. «Փոցխ քշօղ Ժ (10) մշակաց վարձն ետու Գ (3) պիստով ձեռամբ տէր Մելիքսէթին»,—տեղեկացնում է վանքի մատյաններից մեկը[18]:

Ցանքին նախորդում էր սերմերի նախապատրաստումը, այսինքն կատարվում էր սերմերի ընտրություն և տեսակավորում: Հատկապես ուշադրություն էին դարձնում, որ սերմերը լինեին նույն տարվա բերքից հավաքված, խոշոր և ծանր. Գ (3) ապասի ետու սերմացու ցորեն իստակող ԻԴ (24) կանանց ամբարտարի ձեռօք»,—կարդում ենք մատյանում[19]: Եթե սերմերը նախատեսված էին աշնանային ցանքի համար, դրանք ժամանակավորապես պահվում էին պարկերում, իսկ եթե գարնանային՝ պահվում էին հատուկ փորված հողերում. «Ե (5) շահի ետու ներսի ցորնի և գարու հորի վրա բանօղ Ը (8) մշակաց Է (7) փօղով»,—կարդում ենք մեկ այլ մատյանում[20]: Հարկ է նշել, որ առաջին դեպքում սերմացուն լավ էր պահպանվում, իսկ երկրորդ դեպքում խոնավությունից կորցնում էր ծլունակությունը:

Ցանքին հաջորդում էր տափանումը. սերմերը հողում ծածկելու համար գործածում էին ցաքանը, որը նույնպես դժվար աշխատեցվող գործիք էր և ուներ 2—3 լծասարք. «Տափի լուծ քշօղ ԻԴ (24) մշակաց վարձն ետու կես շահօվ Գ (3) ապասի»,—տեղեկացնում է վանքի մի հաշվեմատյան[21]:

---

15 Նույն տեղում:

16 Նույն տեղում, էջ 42:

17 Նույն տեղում, վավ. 27, էջ 55:

18 Նույն տեղում, վավ. 23, էջ 62:

19 Նույն տեղում, վավ. 13, էջ 29:

20 Նույն տեղում, էջ 31:

21 Նույն տեղում, վավ. 23, էջ 46:

«Ելից-մտից» մատյանները տեղեկացնում են և տափանելուն հաջորդող հողի մարկոման աշխատանքի մասին, երբ ծռված, լայն բերանով երկաթյա բահով վարած տարածություններում ջրելու համար առուներ էին անցկացվում: Սա նույնպես շատ աշխատատար պրոցես էր և մեծ քանակությամբ աշխատուժ էր պահանջում. «Մարկուսոյ ՀԶ (76) մշակաց որոց ԼԶ (36)ին Ա (1) շահի Ա փղօվ. ԺԸ (18)ին Ա շահի Բ (2) փղօվ. ԻԲ (22)ին մին շահով վարձ ետու երեք հազար ԹՃՀ (970) դիան»[22]:

Հնձից հետո, որը կատարվում էր գերանդիով կամ մանգաղով, հացահատիկային կուլտուրաների մշակության վերջին գործը կալումն էր, որի մանրամասն նկարագիրը գտնում ենք Ժ. Շարդենի մոտ. «Նրանք,—գրում է Շարդենը,—ցորենը շղթաներով չեն կալում, ինչպես դա անում ենք մենք, այլ առանձնացնում են հատիկը ցողունից հենց կալատեղում հետևյալ կերպ. նախ ցողունները իրար են կապում խրձերով 30—40 ֆուտ (քայլ) շառավիղով, մեզ նման չվախենալով ոչ գողերից և ոչ էլ քամուց: Հետո նրանք այդ խրձերը շրջում են գլխիվայր, որոնց վրայից գնում է կամնասայլը: Վերջինս ունի երեք ֆուտ երկարություն և երկու ֆուտ լայնություն: Կամնասայլի վերևի մասը ավելի նեղ է, քան ներքևինը և ծառայում է որպես նստելատեղ քշողի համար: Ներքևի մասը ունի քառակուսու տեսք, բաղկացած փայտե չորս ձողերից: Երկու ձողերի արանքում կան իրար մեջ մտած երեք, երբեմն էլ չորս կլորավուն փայտեր, որոնք ծառայում են իբրև սռնի և նման են մեր հրուշակագործների գրտնակներին: Գլանաձև սռնիների վրա, մեջ ընդ մեջ հարմարեցված են եռանկյունաձև կտրիչները, որոնք ունեն սղոցի նման սուր ատամներ: Սրանցից մեկը սռնու վրա հարմարեցված է ուրագի ձևով, մյուսը՝ կացնի, որպեսզի տարբեր դիրքերով փռված ծղոտները երկու ուղղությամբ էլ կտրատվեն: Կամնասայլը ունի փայտե քաշիկ կամ կաշվե ձգափոկ, որին լծում են ամեն տեսակի գրաստներ՝ ձիեր, եզներ, ջորիներ, ավանակներ, միայն առանձին-առանձին: Կամնասայլի վրա նստեցնում են տղա երեխայի, որը հարկադրում էր կենդանիներին վազել արագ վարգով: Յուրաքանչյուր կենդանի վազում է մոտ 3—4 ժամ, որից հետո նրան փոխում են: Մոտիկ կանգնած մարդիկ եղաններով հարդը առանձնացնում են հենց կալատեղում, իսկ հատիկները, որոնք ավելի ծանր են, մնում են տակին»[23]:

Էջմիածնի վանական տնտեսությունում երկրագործական մշակությունների մեջ մեծ տեղ էր հատկացված նաև տեխնիկական կուլտուրաներին: Վանքի մատյաններում, օրինակ, որպես գարնանային ցանք թվարկվում են բամբակը և քունջութը, չնայած չի նշված այդ կուլտուրաների զբաղեցրած տարածության չափը[24]: Հատկապես արժեքավոր էր բամբակի մշակությունը, որը միաժամանակ որպես հումք վաճառքի է հանվել վանքի խանութներում. «Բամբակ ծախեցաք վրացի Դավթին ՃԸ (108) լիտր Ա (1) լիտրն Զ (6) ապասի, գինն եղև ԺԲ (12) թուման»,—հայտնում է վանքի մատյաններից մեկը[25]: Նույն բնույթի մեկ այլ վավերագրում ասվում է. «Գենճեցոց բամբակ ծախեցաք ՃԲ (102) լիտր»[26]: Բամբակենու մշակության բնագավա-

---

[22] Նույն տեղում, վավ. 27, էջ 51:
[23] *Chardin*, vol. IV, p. 105–107.
[24] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 376:
[25] Նույն տեղում, վավ. 23, էջ 2:
[26] Նույն տեղում, էջ 20:

ռում վանական տնտեսությունում կիրառվել է մեծ քանակությամբ աշխատուժ. «Բամբակի քաղհանօղ ՀԱ (71) մշակաց վարձն ետու Ա (1) շահով, մէկ թուման ութ հարիւր դիան»,—տեղեկացնում է հաշվեմատյաններից մեկը[27]: Մեկ այլ հաշվեմատյանում էլ կարդում ենք. «Զ (6) ապասի Գ (3) փօղ ետու Քարաքթի բամբակի սէզ հաւաքօղ ԾԱ (51) տղայոց Գ փօղով[28]: Համեմատաբար սուղ են տեղեկությունները քունջութի մշակության մասին, սակայն վանքի ձիթհանների մասին Սիմեոն Երևանցու հայտնած վկայությունները հավաստում են տեխնիկական այդ կուլտուրայի տարածվածության մասին[29]: Ըստ Ի. Շոպենի, վանքի հողատարածություններում իբրև գարնանային ցանք քունջութը զբաղեցրել է 4,5 խալվար ցանովի տարածություն, որից ստացվել է մոտ 1500 փութ բերք[30]:

Իրենց լայն տեսակներով մեծ տարածություններ են զբաղեցրել բանջարաբոստանային կուլտուրաները: Հատկապես նշանակալից էր կաղամբի մշակությունը իր վաղահաս և ուշահաս տեսակներով: Մ. Թաղիադյանցի հավաստմամբ, դեռ 17-րդ դարի սկզբներին ջուղայեցի Կարապետ եպիսկոպոսի կողմից Էջմիածնի վանքի բանջարանոցներում աճեցվել է ծաղկակաղամբ[31]: Վանական տնտեսությունում կային հատուկ հորեր, ուր կաղամբը թարմ վիճակում պահվում էր մինչև խոր ձմեռ. «Ե (5) շահի Զ (6) փօղ ետու ներսի քալամի հորի վրա բանօղ Ը (8) մշակաց Է (7) փողով հոյեմբերի Ե-ումն»[32]:

Բանջարանոցային կուլտուրաներից սոխն ու սխտորը այնքան շատ էին մշակվում, որ վանքը հաճախ ստացված բերքը վաճառքի է հանել. «Երևան տարած սոխագին առինք ԵՌ (5000) դիան Զ (6) շահի», կամ «Սխտոր ծախեցաք Ե (5) լիտր Ա (1) լիտրն Զ շահի գինն առինք Լ (30) շահի»,—տեղեկացնում են վանքի հաշվեմատյանները[33]:

Կարևոր էր նաև բողկի ու շաղգամի մշակությունը, որոնց մասին վանքի մատյաններից մեկում կարդում ենք. «ԱՃ (100) դիան ետու Հասարակաց պաղչայի բողկի և շաղկամի տեղ փորօղ Բ (2) մշակաց Յակոբ վարդապետի ձեռօք մարտի ԺԲ (12)ումն»[34]:

Պակաս կարևորություն չուներ և ընդավորների դասին պատկանող բույսերի մշակությունը (ոսպ, սիսեռ, բակլա, լոբի), որոնցից բակլայի մշակության մասին վանքի մատյաններից մեկը հաղորդում է հետևյալ տեղեկությունը. «Է (7) շահի Բ (2) փօղ ետու բակլի բաղչի առուհանօղ Թ (9) մշակաց Ը (8) փողով տնտեսբաշու ձեռօքն»[35]:

Բոստանային կուլտուրաներից ավելի շատ տարածված էր վարունգի ու սեխի մշակությունը: Աճեցվել է երկու տեսակի վարունգ՝ գարնանային ու աշնանային: Գարնանայինը երկարավուն, ողորկ մաշկով, մշակվել է գարնանը. «Էր ժամանակն գարնանային, վասն որոյ կայր ի մէջ սեղանին վա-

---

27 Նույն տեղում, վավ. 27, էջ 57:
28 Նույն տեղում, վավ. 13, էջ 3:
29 **Սիմեոն Երևանցի,** Ջամբռ, էջ 191, 275, 282, 291 և այլն:
30 *Шопен И.,* Исторический памятник..., с. 680.
31 **Մ. Թաղիադյանց,** Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. 1, Կալկաթա, 1847, էջ 78:
32 Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 30:
33 Նույն տեղում, վավ. 23, էջ 5, 12:
34 Նույն տեղում, վավ. 13, էջ 49:
35 Նույն տեղում, էջ 7:

րունգ, որ է խիար»,—հայտնում է Առաքել Դավրիժեցին[36]: Աշնանային վարունգը, որ փոքր չափի էր ու փշոտ մաշկով, աճեցվել է ամռան վերջերին: Վանքի մատյանները տեղեկություններ են հաղորդում վարունգի մշակության ձևերի մասին, որոնցից ամենակարևորն էր վարը: Վարի ժամանակ հողուրագով հեռացնում էին մոլախոտերը և փխրեցնում բույսի շուրջ եղած հողը («պօղազ լցնել)). «Զ (6) շահի ետու ներսի պաղչայի խիյարի պօղազ լցնող Զ մշակաց բաղչապանի ձեռօք»[37]: Մ. Թաղիադյանցի հավաստմամբ Էջմիածնի վանական տնտեսությունում մշակվել է սեխի մոտ տասը տեսակ, որոնցից լավագույններն էին «Դութման» ու «Շալախը»[38]:

Էջմիածնի վանական տնտեսության երկրագործական զբաղմունքի կարևորագույն բնագավառներից մեկն էլ ավանդական այգեգործությունն էր: Լայն տարածում էր ստացել պտղատու ծառերի այնպիսի տեսակների մշակությունը, ինչպիսիք էին ծիրանենին, դեղձենին, տանձենին, սալորենին ու խնձորենին, նաև թթենին, ընկուզենին, բալենին և այլ:

Այգեգործության մեջ հատկապես մեծ էր խաղողագործության տեսակարար կշիռը: Հիմնականում կիրառվել է թմբային սիստեմով պառկած վազերի մշակությունը, որոնց մեջ առանձնացել են խարջի, մսխալի, գառան դմակ, հաչաբաշ, հալեորուկ, խոզակաշի, եզան աչք, քիշմիշ տեսակները: Մատյաններում հանդիպում ենք տեղեկությունների խաղողի վազի մշակման աշխատանքների մասին: Դրանցից մեկն, օրինակ, հաղորդում է էտոցի մասին, որի ժամանակ հեռացվում էին չորացած հին և նոր, ավելորդ ու անկանոն աճած ճյուղերը. «Ետու Նորագեղի մեր այգոյ յէտելոյ. ինն հազար ութ հարիւր դիան»[39]: Էտելուց հետո կտրած մատերը (աղքատ) հավաքում էին և օգտագործում որպես վառելիք. «Արքատ ժողովօղ ԻԲ (22) մշակաց վարձն ետու բաղչապանի ձեռօք»,—հաղորդում է մատյաններից մեկը[40]: Վազի մշակման կարևոր աշխատանքներից մեկը այգեփորն էր, որում համեմատաբար մեծ քանակությամբ աշխատուժ էր օգտագործվում: Այսպես, միայն Նորագյուղում ունեցած այգիներում վանքը այգեփորի աշխատանքներում վարձակալել է 58 մշակներ. «Նորագեղի մեր այգոյ ԾԸ (58) փորօղ մշակաց վարձ ետու մին թուման հինգ հազար ԴՃ (400) դիան ձեռամբ տէր Սահակին»[41]: Առանձնահատուկ նշանակություն ուներ այգու բուժումը: Որպես բուժանյութ օգտագործել են պղնձարջասպի և կրի խառնուրդը, ինչպես նաև ծծումբ. «Ետու նաև կրչի Վիրապին, որ մեզ կիր տալոյ»,—կարդում ենք մատյաններից մեկում[42]:

Այգեկութը սկսվում էր սեպտեմբերի կեսերից և շարունակվում մինչև նոյեմբերի կեսերը: Քաղած խաղողը կողովներով տեղափոխում էին հրնձաններ, ուր այն տրորվում էր ու վերածվում քաղցուի. «ԺԳ (13) ապասի Ա (1) շահի ետու Բօշի այգու ԼԲ (32) քաղորի կես շահով. ԺԶ (16) քթոց կրող և կոխավորի Դ (4) ապասի Բ (2) շահի Անանիայ վարդապետի ձե-

---

36 **Առաքել Դավրիժեցի,** Պատմութիւն, էջ 472:

37 Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 30:

38 **Մ. Թաղիադյանց,** նշվ. աշխ., էջ 77, հմմտ. **Ղ. Ալիշան,** Այրարատ, Վենետիկ, 1890. էջ 316:

39 Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 27, էջ 51:

40 Նույն տեղում, վավ. 23, էջ 46:

41 Նույն տեղում, վավ. 27, էջ 51:

42 Նույն տեղում, էջ 42:

ոօք,»—տեղեկացնում է վանքի մատյաններից մեկը[43]: Ստացված քաղցուն գնում էր օղու, գինու և դոշաբի պատրաստմանը. «Արաղ քաշելու Է (7) մշակին վարձն ետու»,—հայտնում է մատյանը[44]: Խաղողի այգու խնամքի վերջին պրոցեսը այգեթաղն էր: Այն ևս շատ ծանր աշխատանք էր ու պահանջում էր մեծ քանակությամբ աշխատուժ: Ինչպես վկայում է մատյաններից մեկը վանքի միայն «Վերի այգի» կոչված հողատարածություններում այգեթաղին մասնակցել են 365 մշակներ[45]:

Վերջում կցանկանայինք ասել հետևյալի մասին. Էջմիածնի վանական տնտեսություններում վարձու աշխատանքին մեծ տեղ հատկացնելու հանգամանքը որոշ տարակարծություններ է առաջացրել ուսումնասիրողների շրջանում: Ոմանց կարծիքով 17—18-րդ դդ. Էջմիածնի վանական տնտեսությունը խարխսված էր վարձու աշխատանքի վրա և դա իբր տանում էր ավատական հարաբերությունների քայքայում ու կապիտալիզմի սաղմերի սկզբնավորում: Անժխտելի է, որ Էջմիածնի վանական տնտեսությունում կիրառվել է վարձու աշխատանք, սակայն աշխատանքի այդ ձևը նախ չի հանդիսացել տիրապետող և ոչ էլ ապացուցում է ավատական կարգերի քայքայումը: Այստեղ, ինչպես վկայում են «Ելից-մտից» մատյանները, կիրառվել է ժամանակավոր, սեզոնային մշակների աշխատանքը, որոնք իրենց աշխատանքի դիմաց ստացել են սնունդ և դրամական վարձատրություն:

---

[43] Նույն տեղում, վավ. 13, էջ 14:
[44] Նույն տեղում, վավ. 23, էջ 43:
[45] Նույն տեղում, էջ 70: